ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 250 ՏԱՐԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ, ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը ի սրտե շնորհավորում են գիտնականներին, գիտության բոլոր աշխատողներին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյա հոբելյանի առթիվ։ Գիտությունների ակադեմիայի ստեղծումը նշանակալի ուղենիշ եղավ մեր երկրի գիտության, լուսավորության և կուլտուրայի պատմության մեջ։

Գիտությունների ակադեմիան մեծ ու փառավոր ուղի է անցել և այժմ իրավամբ առաջատար դիրք է գրավում մեր երկրի գիտական կազմակերպությունների ամբողջ սիստեմում, ունի ամենատարբեր պրոֆիլի գիտահետազոտական հիմնարկների լայն ցանց։ Սովետական ժողովուրդը հպարտանում է իր ակադեմիայով, որը բազում վառ էջեր է գրել գիտական մտքի տարեգրության մեջ, բարձր է գնահատում նրա դերը սովետական գիտության զարգացման գործում և նրա մասնակցությունը երկրի կյանքին։ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյակի տոնակատարությունը վերածվեց սովետական գիտության նվաճումների համաժողովրդական ստուգատեսի, ցուցադրեց գիտնականների հասարակական բարձր ակտիվությունը, նրանց անխախտ միասնությունը կուսակցության հետ, նրանց վճռականությունը՝ կենսագործելու կուսակցության կանխագծումները։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նոր դարագլուխ նշանավորեց մարդկության պատմության մեջ, արթնացրեց ժողովրդական մասսաների ստեղծագործական հուժկու եռանդը, որոնք լայն հնարավորություններ ստացան՝ տիրապետելու գիտելիքներին։ Գիտությունը և լուսավորությունը ի սպաս դրվեցին ժողովրդին, սովետական հայրենիքին, սոցիալիստական շինարարությանը։ Սովետական գիտության ակունքների մոտ կանգնած էր մեծ Լենինը։ Նույնիսկ քայքայվածության ու քաղաքացիական պատերազմի ծանր տարիներին հեղափոխության առաջնորդը մեծ ջերմությամբ ու

հոգատարությամբ էր վերաբերվում գիտնականներին, գիտական ուժերը ուղղում այնպիսի հետազոտությունների ծավալմանը, որոնք նպաստում էին բանվորների և գյուղացիների՝ աշխարհում առաջին պետության էկոնոմիկայի և կուլտուրայի սոցիալիստական վերափոխմանը։

Հենվելով կուսակցության ու ժողովրդի մշտական աջակցության վրա՝ սովետական գիտնականները լայն ճակատով ֆունդամենտալ և կիրառական հետազոտություններ ծավալեցին, միշտ գտնվում էին երկրի ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, իսկական կուլտուրական հեղափոխության իրականացման համար մղվող պայքարի առաջնագծում, շատ բան արեցին ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակի համար, մեր հայրենիքի տնտեսական ու պաշտպանական հզորության ամրապնդման համար։

Սովետական գիտնականների հիանալի նվաճումները մեծ ազդեցություն գործեցին համաշխարհային գիտության զարգացման վրա և անբաժանելի են XX դարի բնագիտության ու հասարակական-քաղաքական առաջավոր մտքի շնչտակի առաջընթացից։ Սովետական գիտությունը ակնառու դեր խաղաց մեր երկիրը ամենահզոր ինդուստրիալ տերություններից մեկը դարձնելու գործում։ Այսօր էլ նա հանդես է գալիս որպես գիտատեխնիկական ու սոցիալական առաջադիմության կարևորագույն գործոն, ծանրակշիռ ավանդ է մուծում ժամանակակից քաղաքակրթության զարգացման մեջ, նպաստում Սովետական Միության միջազգային հեղինակության բարձրացմանը։ Անչափ աճել է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի միջազգային հեղինակությունը, ընդլայնվում է նրա համագործակցությունը արտասահմանյան գիտական կազմակերպությունների, հատկապես սոցիալիստական երկրների գիտական կազմակերպությունների և գիտնականների հետ։ Լայն հավանության և պաշտպանության է արժանանում սովետական գիտնականների ակտիվ մասնակցությունը խաղաղության և ժողովուրդների անվտանգության, միջազգային լարվածության թուլացման համար մղվող պայքարում։

Ներկայումս, երբ մեր երկիրը լուծում է իրենց մասշտաբներով վիթխարի ժողովրդատնտեսական և սոցիալ-քաղաքական խնդիրներ, հատկապես աճում է գիտության դերը, որը իրականում դարձել է անմիջական արտադրողական ուժ։ Գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները սոցիալիզմի առավելությունների հետ օրգանապես միացնելը կոմունիստական շինարարության արդի փուլի բնորոշ գիծն է և կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, սովետական ժողովրդի բարեկեցության աճի, նրա նյութական և հոգևոր պահանջմունքների ավելի ու ավելի լրիվ բավարարման անհրաժեշտ նախադրյալը։

Մեր հասարակության մեջ բացառիկ բարենպաստ պայմաններ են ստեղծված գիտության զարգացման համար։ Բնական ու հասարակական գիտությունների բնագավառում կատարվող ֆունդամենտալ հետազոտությունները

ավելի ու ավելի մեծ մասշտաբներով են ի սպաս դրվում կարևորագույն գիտատեխնիկական և սոցիալական պրոբլեմների կոմպլեքսային լուծմանը, որը վճռում է արտադրողական ուժերի արագ զարգացումը, արտադրության արդյունավետության և սովետական ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը, հասարակական զարգացման հրատապ հարցերի մշակմանը, աշխատավորների մարքս-լենինյան աշխարհայացքի ձևավորմանը։

Մարդկության ապագայի համար ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում այժմ երկրի ընդերքի, համաշխարհային օվկիանոսի ուսումնասիրումն ու յուրացումը, շրջակա բնական միջավայրի պահպանությունը, տիեզերական տարածության հետազոտումը։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան սովետական գիտության իսկական շտաբն է, նրա առաջատար ուժը։ Նա կոչված է՝ որոշելու գիտական որոնման ստրատեգիան, բացելու գիտատեխնիկական առաջադիմության արագացման ուղիները, առաջադրված խնդիրների լուծման համար միավորելու միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, ճյուղային և մյուս գիտահետազոտական հիմնարկների գիտնականների ջանքերը։

Զարգացած սոցիալիստական հասարակարգի մտավոր հարաճուն պոտենցիալը, գիտնականների ստեղծագործական ակտիվ գործունեությունը, ժողովրդի հանդեպ նրանց բարձր պատասխանատվությունը, կոմունիստական կուսակցության մշտական ուշադրությունն ու սնդուկ հոգատարությունը սովետական գիտության հետագա հաջողությունների երաշխիքն են։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը հաստատ վստահություն են հայտնում, որ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան, սովետական գիտության բոլոր աշխատողները ՍՄԿԿ XXV համագումարը կդիմավորեն ստեղծագործական նոր մեծագործություններով, արժանի ավանդ կմուծեն կոմունիզմի կառուցման գործում։

ՍՄԿԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ